## 4. ՉԱՐ ԿՆԻԿԸ

Էղնըմ է չի էղնըմ մեկ մարթ ու մեկ չար կնիկ է էղնըմ։ Մարթը մրտածըմ է, թե ի՞նչըղ էնե, օր ապրուստ ճարե։ Կնկանն ասըմ է.— Ընձի հաց էրա, էրթամ պիտի աշխատելու։

Կնիկն առավոտ հաց է էնըմ, մարթուն ճամփա դընըմ։ Մարթը գընըմ է, ղընըմ, հասնըմ է մի ծերունու։ Ծերունին հարցընըմ է էս մարթուն.— Էդ ո՞ւր ես էրթըմ։

Մարթըն ըսըմ է.— Էրթըմ եմ աշխատելու, բյասիր մարթ եմ։

Ծերունին ըսըմ է.— Օր քյասիր մարթ ես, առ էս էրկանքը, տար ձեր տունը, համա ճամփին չասես. «Էրկանք չան, էրկանք, քեզի տեսնիմ էրկանք»։

Էս մարթն էրկընքներն առնըմ է, դալըմ է տուն։

Ճամփին չի համփերըմ, ասըմ է.— Էրկանք չան, էրկանք, քեզի տեսնիմ էրկանք։— Հենց օր ըսըմ է, էրկանքը ըսկըսըմ է ալուր աղալ։ Ըսըմ է.— Հերիք է։

Ուրախանըմ է ու բերըմ է տուն։ Կընիկն ըսըմ է.— Էս ի՞նչ ես բերե։

Մարթը պատմըմ է իրան ղլխի անցածը ու ասըմ է.— Էրկանք չան, էրկանք, քեզի տեսնիմ էրկանք։

Էս ըսելուն պես էրկանքը ալուր է աղըմ։

Օրերն են անցնըմ, մարթ ու կնիկ հարըստանում են։ Համա չար

կնիկը էլի չի լսում։ Ասում է.— Գնա ծերունու քովը, ասա, որ մեզի ուրուշ հարստութուն տա։

Մարթը էլի ետ է դառնում, գընում է ծերունու քովը, ուրուշ հարստութուն է ուզում։ Ծերունին էս անգամ տալիս է մեկ հատում հավ, ասում է.— Ճամփեն չասես. «Հավ ջան, հավ. քեզի տեսնիմ հավ»։

Էս մարթը տուն էրթալուց չի համփերում, ասում է.— Հավ ջան, հավ, քեզի տեսնիմ հավ,— ու հավն ասկըսում է հավկիթ ածել։

Մարթըն ասում է.— Հերիք է։

Տանում է տուն։

Չար կնիկը էս հավով էլ չի կըշտանում։ Ասում է.— Գնա ծերունուց ուրուշ բան ուզե։

Էս խեղճ մարթըն էրթում է նորից ծերունու քովը, բերում է մեկ հատ սուրֆա։ Տալիս է չար կընկանը և ասում է.— Սուրֆա ջան, սուրֆա, քեզի տեսնիմ սուրֆա։

Սուրֆեն օր կը լսե, կը բացվի. ի՞նչ ասես ու տելիք կուտա։

Չար կընիկը օրերից մի օր չի համփերում, ասում է խեղճ մարթուն.— Գնա՛ ծերունուց ուրուշ բան ուզե։

Մարթը կէրթա ծերունուն կըսե.— Կընիկըս ուրուշ բան գուզե։ Էս անգամ տալիս է մեկ հատ կոբալ ու մեկ հատ էլ փոստ։ Տալիս է ու ասում է.— Ճամփին չասես. «Կոբալ ջան, կոբալ, քեզի տեսնիմ կոբալ»։

Մարթը տուն էրթալուց ճամփին ասում է.— Կոբալ ջան, կոբալ,— ու խոսքը բերանը կոբալը ֆըռռում է իրա գլխուն։— Հերիք է,— ասում է մարթը։ Կոբալն էլ չի զարկում։

Բերում է տուն։ Չար կնիկն ասում է.— Կոբալ ջան, կոբալ, քեզի տեսնիմ կոբալ։

Կոբալը փոստի միչեն դուս է գալիս ու էնքան է զարկում կընկա գլխուն, որ մեռնում է։

Մարթը ազատվում է չար կնկանեն։